

Գործի համարը _____

ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
(IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS)
ԱՐՏԱԺԱՄՅԱ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ՊԱՀԱՆՁՆԵՐ
ՍՏԱՑՈՂԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Այս փաստաթուղթը տեղեկություններ է տրամադրում արտաժամյա ու աշխատանքային շաբաթվա պահանջների մասին՝ ինչպես պահանջում է նահանգային օրենքը (Վելֆերի և հաստատությունների կողմի մասեր 12300.4 ու 12301.1) IHSS ծրագրի համար: Ես պետք է կարդամ այս տեղեկություններն ու ստորագրեմ այս ձևը, որպեսզի ցույց տամ, որ ես հասկանում եմ ու համաձայն եմ հետևյալ պահանջներին:

- Ըստ նահանգային օրենքի, առավելագույն ժամերի քանակը, որը IHSS մատակարարողը կարող է աշխատել աշխատանքային շաբաթում՝ տրամադրելով հաստատված ծառայություններ, կազմում է առավելագույն շաբաթական ժամերը: Իմ ընդհանուր ամսական հաստատված ժամերն այժմ բաժանվելու են 4-ի՝ որոշելու համար իմ առավելագույն շաբաթական ժամերը: Աշխատանքային շաբաթը սկսում է կիրակի, ժամը 12:00 a.m.-ից (կեսգիշեր) և ավարտվում է հաջորդ շաբաթ օրը, ժամը 11:59 p.m.-ին:
- Ես կարող եմ թույլ տալ իմ մատակարարողին աշխատել իր նորմալ աշխատանքային ժամերից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, առանց վարչաշրջանից համաձայնություն խնդրելու, եթե դրա հետևանքով իմ մատակարարողը
 1. Աշխատում է ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան նա սովորաբար աշխատում է,
 2. Աշխատում է 40 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում, եթե առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս մեկ աշխատանքային շաբաթում, և
 3. Աշխատում է 66 ժամից ավել աշխատանքային շաբաթում, եթե իմ մատակարարողն աշխատում է մի քանի ստացողների համար:
- Ամեն անգամ հետևյալից որևէ մեկն անելիս, իմ մատակարարողը խախտում կստանա՝
 1. Ես իմ մատակարարողի միակ ստացողն եմ, և նա աշխատում է 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում առանց վարչաշրջանի հավանության, երբ իմ առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս աշխատանքային շաբաթում:
 2. Իմ մատակարարողն աշխատում է մեկից ավելի ստացողների համար, ու նա աշխատում է ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, կամ

Գործի համարը _____

3. Իմ մատակարարողն աշխատում է ինձ համար ավելի քան իմ առավելագույն շաբաթական ժամերն են մեկ աշխատանքային շաբաթում առանց վարչաշրջանի հավանության, ինչի պատճառով սովորականից ավել են արտաժամյա ժամերը մեկ ամսում, կամ

4. Իմ մատակարարողի ճամփորդության համար հայցված ժամանակը գերազանցում յոթ ժամ աշխատանքային շաբաթում:

- Երբեմն ինձ կարող է անհրաժեշտ լինել, որ իմ մատակարարողն աշխատի իմ շաբաթական առավելագույն ժամերից ավել: Ես պետք է վարչաշրջանից հավանություն խնդրեմ իմ շաբաթական առավելագույն ժամերը փոփոխելու համար. նույնիսկ եթե վարչաշրջանը հաստատի բացառության իմ խնդրանքը, ես պետք է ամեն այնպես, որ իմ մատակարարողն ավելի քիչ ժամեր աշխատի հաջորդ աշխատանքային շաբաթ(ների) վա ընթացքում, որպեսզի ես չգերազանցեմ իմ հաստատված ամսական ժամերը: Վարչաշրջանն ինձ ծանուցում կուղարկի՝ տեղեկացնելով, թե արդյոք իմ բացառության խնդրանքը հաստատվել է, թե մերժվել:
- Վարչաշրջանն ինձ ծանուցում կուղարկի, երբ իմ մատակարարողը խախտում է ստանում: Եթե իմ մատակարարողն ունենա երեք խախտում, նա երեք ամսով կզրկվի IHSS տրամադրելու իրավունքից: Եթե երեք ամսվա հեռացումից վերադառնալուց հետո նա կրկին խախտում ստանա, ապա նա մեկ տարով կհեռացվի մատակարարողի աշխատանքից:

ՓԱՍՏԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ես հասկանում եմ և համաձայն եմ հետևել այս ձևում թվարկված պահանջներին:

| | |
|-------------------------|----------|
| ՍՏԱՑՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ | ԱՄՍԱԹԻՎ՝ |
|-------------------------|----------|

| | |
|----------------------------|--|
| ՍՏԱՑՈՂԻ ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝ | |
|----------------------------|--|

| | |
|---|----------|
| ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ | ԱՄՍԱԹԻՎ՝ |
|---|----------|

| | |
|--|--|
| ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝ | |
|--|--|

ՄԻԱՅՆ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ (FOR COUNTY USE ONLY)

| | |
|--------------|-------|
| WORKER NAME: | DATE: |
|--------------|-------|